384

Էլմ. 709, ՀԵ 369

1. Որդյա́կ, գնա այգիս գործե,
Թող ճակատդ քրտնե,
Մինչ ցերեկ է, աշխատե,
Երջանիկ ըլլաս պիտի:
Ջա́նք թափե մեջն այգիիս,
Վերջը կվարձատրվիս:

2. Միածինս ալ երկնքեն
Այս խավար աշխարհն իջավ,
Այգիիս մեջ վեհորեն
Նա Իր կյանք փրկանք տվավ:
Ջա́նք թափե մեջն այգիիս,
Որ շատ հոգիներ շահիս:

3. Նախատեն երբ թշնամիք,
Դուն այսօր մի վշտանա,
Չերևնան այլ արգասիք,
Հավատքեդ մի՛ թուլանա:
Ջա́նք թափե մեջն այգիիս,
Որ պսակ դու ընդունիս:

4. Որդյա́կ, գնա այգիս գործե,
Առիթդ մի՛ փախցնե,
Քա́ջ եղիր, ժիր աշխատե՛,
Շուտ կանցնեն նեղություններ:
Ջա́նք թափե մեջն այգիիս,
Հավիտյան պիտ օրհնվիս:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025